

հրատարակութիւնը ոչ միայն բնագրին (գանիերէն) լեզուով, այլև անգլիերէն, ֆրանսիերէն, գերմաներէն, ռուսերէն և ուրիշ լեզուներով: Հրատարակիչն է Բոյէսըն (Bejesen), որ ոչ այնքան շահե համար է ձեռնարկել գործը, որչափ իւր ազգի փառքն համար: Գանիերէնի հրատարակութեան օրինակն արժէ 32 կրօնէ, իսկ օտար լեզուինը, գործընակի գերմաներէնինը—13 կրօնէ, և գանիացիք չեն բողոքում, որ օտարազգիք իրանց հաշուով են կարգում իրանց Աննեքսէնը: Յոյս կայ, որ հրատարակիչը կը շէնքերի նկատմամբ նոյն ղեջումը կանէ նաև հայերէն հրատարակութեան համար, բայց այս մասին էլ յետոյ:

Մայիսի մէկ: Յայտնի է, որ Եւրոպայում այս օրը պատկանում է մշակներին: որոնք պահանջում են իրանց վիճակի բարւոյցումն, մանաւանդ օրական աշխատութեան միայն 8 ժամ տեղութիւն:—Այս տեղ օրն սկսուեցաւ շատ հասարակ կերպով: խանութներն իրանց առուտուրը, ժողովուրդն իւր լուր օրուայ զբաղմունքը սովորական կերպով վարեց և շարունակեց: Սկսեց անձրեւել, հարուստներն իրանց գրասենյակներում չարախնդութեամբ ժպտացին, որ հանդէսը չի յաջողուի, իսկ մշակն ասաց, թէ երկինքն արտառում է: Սակայն բանուորը չի հարցնում եղանակի յաջողութիւնը կամ անյաջողութիւնը: Նշանակած ժամին (կէօրեց յետոյ 3-ին), նշանակած փողոցների դժով, այնչափ գեղեցիկ հանդիսաւոր ճանապարհ բացուեցաւ 36 մշակ ընկերութիւնների անցքի համար—կանաչ գրասանդներով, գոյնզգոյն զրօշակներով, հինգ-յարկանի տների պատուհաններից նայող բազմութիւններով, որչափ երբէք չի եղել, ըստ արժանաւոր վիպագրութեան: Այդ գծում կառքերի շարժումը դադարեց, դնացքի գլուխը կազմում էր հրդեհաշէնքների խումբը, ամէն մէկ ընկերութիւն իւր երաժշտով, գրուազով, գրօշներով և վառերով մէկ առանձին գեղանկար բաժին էր կազմում և հանդիսատեսների ծափահարութեան և «կեցցէ»-ներն էր արժանանում: 20,000 մարդու թափուրը հանգիստ անցաւ, առանց ոտակիանութեան միջամտութեան, հաւաքուեցաւ մի ընդարձակ հրապարակում: Ի պատիւ 8 ժամի երգ հնչեցրեց (իւրաքանչիւր անգամի վերայ տոյժի նշան կար, երեք անգամ 8 ձևացնող թերթներից տերը), այս տեղ ճառեր խօսուեցան, թէ այժմեան բանուորները առաջուայ պէս վայրենի չեն, օրինական ճանապարհով, երեսփոխանների միջնորդութեամբ պաշտպանում են իրանց դատը, կատարելագործում են արուեստը, ձգտում են դատակարգերը պիտանի և օգտաւէտ կացութեանը և ոչ թէ ջնջելու են յաւակնում և այլն:

Բազաքը ի թիւս այլոց 1864-ին Հելզոլանդի

մօտ մեծ յաղթութիւն տանող ծովապետ Սուէնսոնին արձան է կանդնեցուցել: Ծովային հերոսի նաւալները (սընցելց այժմ 2 հատ է մնացել) տարեցտարի մի որեւէ նշանով իրանց պետի պատկաւելի յիշատակը նորոգում են. այսօր առաւօտեան արձանի կշտին անցնողները կը տեսնէին մի մեծ փառաւոր պսակ, և ոչ որ չէր կապիւսի, թէ ո՛ր պէտք է կատարած լինի այդ բարեպաշտական ձօնը:

Ս. Մ



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Մ.Է.Զ

(ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՍՈՒԱԾՔ)

(Շարունակութիւն) *

Ի

Վ Ի Պ Ա Ս Ա Ն Ք.

2.

(Խառնուած լեզուներով)

Վիշապազանց առասպելը:—Երկու տեղ (Ա. Ի. Բ. խթ.) առասպելի համառօտ բովանդակութիւնն է բերում պատմագիրը, իսկ մի տեղ (Բ. ծա.) պատմում է «Ճշմարտելով», այսինքն առասպելականին տալով պատմական կիրպարանք: Այդ հրեք հատուածն իրարու համեմատելով կրտսեանը մօտաւորապէս բուն առասպելի բովանդակութիւնը, ընդ ամէնը չորս միջադէպ:

... Ինչպէս էր (Խ. Է.):

1. Յազատն ի վեր ի Մաթիս բնակող վիշապ կամ վիշապազն Արգաւան վիշապների տաճարում ծառ է տալիս ի պատիւ Արտաշէսի և խորհրդանշակ լինում նորան:

2. Արտաշէսի քաջ որդին Արտաւազդ ի հիմնանալն Արտաշատու, ապարանքի տեղ շքանելով, անցնում գնում, շինում է ի մէջ Մարաց (— Վիշապաց, վիշապազանց ?) Վարակիրտ:

3. Սաթեմիկ տիկնոջ տնայնաքը կամ սէրն առ Արգաւան վիշապը կամ վիշապազն:

Բ. վիշապահ (Բ. Ի. Բ.):

Այստեղ բաց ենք թողնում սկզբում դրած պատմականն ու կենցաղականը¹ և առնում ենք միայն, ինչ որ վիշապներին կամ վիշապազանց է վերաբերում: Նկատենք նաև, որ չեն յիշուած թուեղեաց երգերի 1. և 2. միջադէպերը, այլ պատմականից ու կենցաղականից յետոյ յիշուած է անմիջապէս 3-րդ միջադէպը և մի չորրորդ միջադէպ ևս աւելանում է:

3. (Իբր) տրփանք Սաթիւնկան ընդ վիշապազունս:

4. Մարտ ընդ նոսա և քայքայումն յիշառնութենէն և հերկիզութիւն շինուածոցն:

Գ. Ճշմարտեալ պատմութիւն (Բ. Զ. Բ.):

Այստեղ տեսնում ենք, որ 4-րդ միջադէպում յիշուած մարտը Արտաւազին է առնում: Պատմագիրը իւր «ճշմարտեալ» պատմութիւնն անելուց յետոյ աւելացնում է. «Այս Արգամ է որ յառասպելին Արգաւանն անուանի և այս պատճառ պատուեալովն ընդ Արտաւազույ: Խորենացու լեզուն և մեկնութեան եղանակը (տես զԲ. Գ.) հասկացողը կրտսնէ, որ այս գլխի մէջ մինչդեռ Արգամ անունն եւ պատեալովի պատճառն իրեն պատմագրինն են, Արգաւան անունը և պատերազմ ընդ Արտաւազայ՝ առասպելինն են: Խորենացու մեկնութեամբ միայն այդ երկու տարբեր անձերը նոյնացել են²: Եւ ի՞նչ է Արտա-

ւազդի և Արգաւանի թշնամութեան և պատերազմի պատճառն ըստ Խորենացու: Արտաւազդը՝ «նախանձ բերելով ընդ ծերունայն Արգամայ, հրապուրեաց զհայր իւր ցառնուլ Արգամայ, որպէս թէ թագաւորել ի վերայ ամենայնի խորհիցի: Այսպէս ընկեցեալ զնա ի պատելոյն, ինքն առնու զերկրորդութիւնն»: Ապա շարունակութեան մէջ գրում է. «Իսկ Արտաւազդայ ոչ շատացեալ առնուլ ի բաց ի նոցանէ զերկրորդութեան պատիւն»... «Ուրեմն այդ նախանձը երկրորդութեան համար՝ պատմագրի մեկնութիւնն է միայն՝ առասպելի «այլարանութիւնը ճշմարտելու» և «ոճով» պատմելու համար մէջ բերած:

Պատմագրի աւելացածն է հաւաստեալ և վերջի կտորը. «բայց միայն աննշանաւորք ոմանք և կրտսերք փախուցեալ առ Արտաշէս ապրեցան ի դրան արքունի»: Մի անգամ որ Խորենացին վիպասանքի վիշապազունք դարձրել է Մուրացանք, անհրաժեշտ պիտի լինէր այս յաւելուածը՝ Մուրացանների սերնդի գոյութիւնը չոչնչացնելու համար:

Նկատենք և այն, որ պատմագիրն իւր «ճշմարտեալ» պատմութեան մէջ չէ բերում

դուրեան յիշողութիւն կ երուանդի քառեկամանալը մտաց հետ եւ մտացոց սէր Արգամին քառեկացնելը (Բ. խդ): Բուն պատմական իրողութեան յիշողութիւն կ եւ Արտաշէսի բշխանութիւնը մտաց հետ: Արտաւազդեան Արտաշէսը կուում կ մտաց հետ, իսկ Խորենացին իւր Արտաշէսի համար գրում կ թէ շատ շատաւել կ Ամիդանի գաւմերին, այսինքն մտաց ազգը (Բ. կա): Սակայն որ Արգամը պատերազմի ժամանակ Արտաշէսի կողմն անցած լինի և Արտաշէսը նորա քառեկացած (Բ. խդ. խէ), այդ հակասում կ պատմութեանը: Այս հակասութիւնը հասկանալի կ թէ ինչից է առաջացել: Մի անգամ որ մեր պատմագիրը, նոյն իսկ իրեն վիպութեամբ, մտացոց սէր Արգամին նոյնացնում կ վիշապ Արգաւանի հետ և իրենից իրիւ պատեալովի պատճառ դնում կ Արտաւազդի նախանձ Արգամին՝ երկրորդութեան պատիւ համար, անհրաժեշտ էր, որ պատմութեան առաջի մասի մէջ Արգամն Արտաշէսից անցած լինէր երկրորդական ցանք, որ յետոյ հնարաւոր լինէր անել թէ պատեալովի պատճառը նախանձն է: Արգամի անցնելն Արտաշէսի կողմը եւ նորա անցած պատիւները անհրաժեշտաբար Խորենացու աւելացածներն են: Եթէ այդ դուրս ձգուի, այն ժամանակ կրմայ այն, որ Երուանդ քառեկամ կ մտաց և մեծացնում կ մտացոց սէր Արգամին, — մի պատմական յիշողութիւն, իսկ Արտաշէս շատ շատաւել կ մտաց ազգը, — դարձեալ մի պատմական յիշողութիւն:

¹ Նկատենք, որ պատմագիրն առանձին կարեւորութիւն չէ տալիս նկարներն ըստ ժողովրդականից դասաւորելուն: Գլխի վերնագիրը դրած լինելով՝ վիպան շինուածոց Արտաշէս խալաֆի, բնականօրէն ամենից առաջ դրած է «շինել զխալաֆն», և ապա «խնամութիւն ընդ Ալմի և ծնունդի զարմիցն»: Միևնուրեք բունեաց երգերի մէջ, որ երգերի խօսքերով կ գրում, ի հիմնական ի Արտաշէսու Արտաւազդ արդեւ լախաճառ կ: Սակայն «նիմանանքն» բառը հասկացում կ ոչ այնքան «նիմենք», որքան «շինանալ», շինելի դառնալ, լցուել: Այն ժամանակ «ի հիմնանայն Արտաշէսու» կր հասկացուի. «Արտաշէսը որ շինացաւ, շինելի դարձաւ՝ Արտաւազդն ապարմելի տեղ լցաւ»... Այս դիպում վիպասանի և բունեաց երգերի պատմական և կենցաղական միջադէպերի դասաւորութիւններն իրար լին հակասում այդ եւս: Եւ այս աւելի հաւանական ենք համարում:

² Բանի որ վիպասանի նկարն Արտաշէս Արտաւազդեանի պատմութիւնից է առնուած, բուն պատմական իր-

3-րդ միջադէպը՝ Սաթմենիկի սէրն առ Արգաւանս Անշուշտ այն պատճառով որ չէ հաւատում թէ Սաթմենիկի պէս մի անկէն կարող էր այդ բանն անել։ Եւ այս հաւաստի է այնու, որ վիպասանքի բովանդակութեան մէջ բերելիս էլ գրում է. «իբր արփանք Սաթմենիկան»։

Մնացածը մի քանի մանրամասներինց զատ նոյնն է ինչ որ թուելիաց երգերի և վիպասանքի բովանդակութեան մէջ կայ և այն էլ միեւնոյն շարքով։

1. Երթալով արքայի ի ճաշ Արգամայ, կասկած իմն անկեալ իր թէ դաւել զարքայն խորհեցան, յարուցանին որդիս արքային սպառնալ և անդէն իսկ ի հացին փաշեն զայն Արգամայ։ Եւ խռովութեամբ մեծաւ եկեալ յԱրտաշատ Արտաշէս արքայ ...

Ընդգծածները չկան վիպասանքի բովանդակութեան մէջ. կարող են և վէպից առնուած լինել և թորենացու աւելացրածը լինել։ Վերջին նախադասութիւնը շատ բնական հեռեանք է խորգաւանքի, ուստի և կարող է վիպասանքից առնուած լինել։

2. ա) Գարձեալ արձակեաց զորդի իւր զՄաժան մեծաւ գեղաւ և բազումս յաղգէն Մուրացան սպանանել հրամայեաց և զպարանան Արգամայ այրել և զհարձ նորին որ կարի չքնաղ էր գեղով և մնացեալ գնացիւք ոտից, զոր կոչէին Մանգու, ածել ի հարձութիւն Արտաշիսի, Զոր գարձեալ նուաճեալ յետ երկուց ամաց, ի բաց առ զհրամայէ զինչսն բայց ի հարձէն։

բ) Իսկ Արտաւազգ ... հանէ 4 զՆախճաւան և ըստ հիւսիսոյ Նրասիսայ զամենայն գեղաւ, յորում և ապարանս և բերդս ի նոցանէ շինէ իւր ի ժառանգութիւն։

Այս 2-րդ միջադէպի ա մասը, որով Արտաշէսը Մաժանի ձեռով՝ կռուում է Արգաւանի հետ և երկու տարուց յետոյ հաշտուում է, չկայ բովանդակութեան մէջ։ Ընթերցողը կարող է վիպական լինել։ Իսկ ք մասը նոյն է ինչ որ թուելիաց երգերի 2-րդ միջադէպը. «Արտաւազգ ... շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ, որ է ի զաշտին՝ որ անուանեալ կոչի Շարուրայ։ Շարուրի դաշտն է ըստ հիւսիսոյ Նրասիսայ»։

1. Երեւոյցներն պատմական իրաւ մեկնութիւն դուրս եկն մօտ։

3. Սաթմենիկ տիկնոջ տրփանքը չկայ։

4. Այսմ ոչ կարացեալ համբերել որդւոյն Արգամայ, ընդդիմանայ նմա պատերազմաւ. բայց յաղթեալ արքայորդւոյն՝ սատակէ զամենայն ծնունդըս Արգամայ հանգեծ հարրն, և որք միանգամ երևելիք յաղգէ Մուրացան, և գրաւէ յինքն զէնս և զամենայն իշխանութիւնս նոցա, Եւ ոչ որ ապրեաց ի նոցանէ։

Արգամի որդին է միայն իբրեւ նորութիւն մէջ մտնում, երեւի այն պատճառով որ Արգաւան վիշապը Մուրացան նախարար Արգամ դարձած, այն էլ Արուանդի ժամանակից, շատ ծերացած էր և «ճմարտեալ» պատմութեան մէջ անհաւաստի կրկնէր, որ նա կռուէր Արտաւազգի դէմ։— Բովանդակութեան մէջ յիշած «հրկիզութիւն շինուածոցն» կամ բաց է թողած, կամ թէ է 2-րդ միջադէպի ա, հատուածի մէջ մտցրած զպարանան Արգամայ այրել։

Միացնելով այս ամէնը, իբրեւ վիշապազանց տռասպելի բովանդակութիւն՝ կրտսնայնք հետեւեալը։ («Ճմարտեալ» կամ զարդարեալ պատմութիւնից առած կոտորները փակագծի մէջ ենք դնում)։

1. Յաղաւն ի վեր ի Մասիս բնակում են վիշապներ կամ վիշապազուք, որոնց մասին անյայտ իբր են պատմում։ Նոքա ունին տաճար վիշապաց, Այդ վիշապներից մէկն (և զխաւորն ու հայրն) է Արգաւանը։

Վիշապ Արգաւանը հայոց թագաւորին (և նորա որդիներին) իւր մօտ ճաշի է հրաւիրում, Արտաշէս թագաւորը գնում է ի պատիւ իւր՝ վիշապաց տաճարում տրուած ճաշին, Արգաւանն ուզում է ճաշի ժամանակ խորգաւանակ լինել կամ դաւել թագաւորին, (Սա զարացած վերադառնալով Արտաշատ՝ իւր Մաժան որդուն ուղարկում է զօրքով կռուելու վիշապների դէմ և զոցա կոտորելու։ Բայց երկու տարուց յետոյ հանգիստ է թողնում նոցա)։

2. Արտաշէսի քաջ որդին Արտաւազգ, Արտաշատ քաղաքը շէնացած, շէնելիք գարձած լինելով, այնտեղ իրեն համար ապարանքի տեղ չէ գտնում։ Նա գնում է վիշապների մէջ մտնում իւրում է նոցանից նոցա կաշուածները, (Երասիկ հիւսիսային կողմում նոցա բոլոր գիւղերն, ապարանքներով կամ տաճարներով ու բերդերով միասին, բոլորն իրեն է սեպհանում)։ Ընկնում է (չէն է պահում, չէնացնում ?)։ Ի մէջ Մարաց՝ զՄարակերտ (Հարուրի դաշտում) և այնտեղ բնակում։

3. Արտաւազգի մայրը, Սաթմենիկ տիկին արք-

փանք է ունենում ընդ վիշապադունս կամ տեն-
շանք ու սէր առ Արգաւան վիշապը:

4. Վիշապները չեն ուզում տանել Արտա-
ւազդի արարքները և կուռում են Արտաւազդի հետ:
Բայց նոցա իշխանութիւնը քայքայում է: որովհե-
տե Արտաւազդ յաղթում է նոցա: կոտորում է
ամենքին: Արգաւանի բոլոր ծնունդն ու իրեն Արգա-
ւանին սպանում է: շինուածներն այրում է և իւր
ձեռք ձգում նոցա բոլոր գիւղերն ու իշխանու-
թիւնը: —

Այս է ամենը, ինչ որ վիշապազանց կամ
վիշապների առասպելին է վերաբերում: Եւ
այս պատմութիւնը Խորենացին նոյն իսկ
պատմողներից առնելով իւր մեկնութիւնը,
փոխում է Մարաց և Մուրացանների վրայ,
և վիշապ Արգաւանը դարձնում է Մարացւոց
տէր Արգամ:

Մի կողմ թողնելով պ. Խալաթեանի
բոս ամենայնի թողլ կարծիքների քննադատու-
թիւնը, մենք կրփորձենք հասկանալ այս ա-
ռասպելը, համեմատելով մեր և ուրիշ ազգերի
կենդանի առասպելների հետ:

Սեւ լեռան կամ Մասիսի վիշապները:—
Թէ ինչ են վիշապները և ինչեր են պատ-
մում նոցա մասին, մենք այդ գիտենք (Հմմտ.
դ. Դ.): Հայոց լեռներից շատերի համար ցարդ
առասպելարանում է ժողովուրդը թէ օձեր
կամ վիշապներ են կենում տնոց մէջ: Եւ
քա ընկում են քարայրերում ուր և ունին
իրենց ապարանքները կամ տաճարները¹,
ունին իրենց թագաւորներն ու թագու հիները,
զօրքն ու զօրավարը, և իրար գէմ կոխներ
են մզում բոլորովին նման մարդկային կեան-
քին ու թագաւորութեան: Այդ վիշապներն
իսկապէս մարդիկ են, միայն «օձեղէն շապկով»
որ ուզած ժամանակ հանում են և մարդ-
կային կերպարանք ստանում: Նոքա մարդոց
հետ յարաբերութիւն ունին և մեր կանանց
հետ սէր էլ են անում²:

Այդպիսի զրոյցներ շատ են պատմում
Դողթնեաց սահմանի վրայ, Նախիջևանից ոչ

հեռու գտնուող մի գաղաթի մասին, որի ա-
նունն իսկ Օձալեռան (Պանդաղ, Պանլու)
պէտք է առնուած լինի օձերի այդ պատմու-
թիւնից: Մենք այդ լեռան օձերի կամ վի-
շապների մասին շատ հրաշալի պատմութիւն-
ներ ենք լսել բայց ցաւ է, որ զրի առած
չլինելով՝ չենք կարող բերել:

Ի թիւս այլ լեռների այդպիսի օձերով
կամ վիշապներով բնակուած է համարում
և Մասիսը, որ Արտաւազդի առասպելի մէջ,
Ծայամաւորքում կուռում է Սեւա լեռան³, և
հինց ժողովրդի մէջ, բոս Թաղիադեանի կո-
չուել է Մուլծն աշխարհ², Ասում են թէ
Մասիսի վիշապները մի քանի տարին մի ան-
գամ մեծ կոխ են ունենում Արագածի վի-
շապների հետ: «Պէս պէս առասպելներ» ունի
յառկապէս Փոքր Մասիսը: Պատմում են
որ Փոքր Մասիսի վրայ կան վիշապներ և օ-
ձեր ահագին մեծութեան այդ պատմաւորով
խիստ զժուար է, և համարեն անկարելի է նո-
րա գաղաթը բարձրանալ: «Բարձրանալիս լե-
ռան խորքերից կամ տակից մշտապէս լսում
են այնպիսի զարհուրելի խուլ ձայներ, որ
մարդ սրտապատառ կարող է լինել»³:

Մասիսի հետ կապուած վիշապների այս
զրոյցները մօտենում և նոյնանում են նոյն
լեռան վրայ Խորենացու պատմած առասպե-
լին: Հին ժամանակից ցայսօր Մասիս կամ
Սեւա լեռան ուրեմն համարում է վիշապ-
ների բնակարան, որոնց մասին «պէսպէս բա-
ններ» անյայտ իրքք են պատմում:

1. Xalam. Арм. Զոօց, II. եր. 74.

2. ձանպարհորդութիւն Մասիսի վրայ Դ. Թաղիա-
յեանց, Կապարայ, 1847, Ա. եր. 167:

3. Ընթեր հաստատման նախաձեռն, Տիփլիս, 1883.
Ա. եր. 230. Այսին Տիգրանեանի ձանպարհորդութիւն
«Դեպի Փոքր Մասիս գաղաթ»: Աւերոյ լի լինելու հոյն
սեղից քեռի էր հեռուաւոր. «Ոմանք էլ ասում են, թէ
գաղաթի վրայ աղանութի (հակաճիւղ) գերեզմաններ կան...
Մի ֆանիս էլ լսել են, որ գաղաթի վրայ ուղանալի
ֆառան կայ ֆառացած, նաեւ ուղանալուն էլ այնպիսի
ֆառացած կանգնած է, մեկ մեկով բռնած ունի առա-
նորդող ուղի ստեղծ, իսկ միւս մեկին խո քաւազանք»: Փոքր
Մասիսի վրայի լեռ (որի գոյութիւնը հերքում է պ.
Տիգրանեան) պատմութիւնը, միացած Աղանութի կամ Օղու-
ղի գերեզմանի եւ ֆառացած ուղեների շարանի այս պատմու-
թեան հետ՝ յիշեցնում է Նեմուր սարի քաւազանի եւ
Թիւն ուղեների առասպելը (Հմմտ. եր. 237 հոմ.):

1. Հմմտ. Եզնիկ. եր. 104. «Եւ ոչ ասմար իրեն
մարդկան են նոցա (վիշապաց) ի բնակութիւն»: Վարդանի
բաժնը՝ «Տեսնալ ունեց ֆառաց եւ վիշապաց ասմարս ի
բերին եւ բնակութիւն» (Xalam. Арм. Զո. II.
եր. 74):

2. Հմմտ. Սրտանձեան, Իրոց Բրոց, եր. 44. Մ.
Abeghian, Der Armenische Volksglaube, եր. 76:

Բայց այս՝ առասպելի ընդհանուր կողմն է միայն:

Առասպելի վարիանտները մեր եւ ուրիշ-ների մէջ:—Միթական բնաւորութիւն ունեցող առասպելները հնչողութեամբ չեն մոռաց-ւում ժողովրդի մէջ: Այլ երկար պահուում են, միայն կերպարանափոխ լինելով և ուրիշ առասպելների հետ կցուելով և կամ իրենցից մասեր միայն մոռացութեան տալով: Միւս կողմից միթական բնաւորութիւն ունեցող առասպելները մեծ մասամբ միայն մի ազգի չեն պատկանում: Ուստի և շատ բնական է, որ Արտաւազդի ու վիշապների առասպելն էս, ոչ միայն ընդհանուր գծերով, այլ և մաս-նաւոր միջադէպերով գտնենք այժմ հայոց և ուրիշ ազգերի մէջ:

Ցաւ է, որ հարկաւոր զրքերը ձեռի տակ չունենալով՝ չենք կարող բերել աւելի աչքի զարնող օրինակներ և բոլոր մանրամաս-նութեամբ: Մենք օգտուում ենք միայն մեր ձեռին ունեցածից, որը կարծում ենք, բաւական է:

Ամենից առաջ նկատենք, որ ինչպէս ու-րիշ ազգերի, օրինակ՝ գերման առասպելաբա-նութեան¹, մէջ այդպէս և մեզնում դեւ (Riesen), վիշապ, աժդահա կամ աժդահար, իրար հետ սերտ կապուած են և յաճախ փոխանակում են իրար: Դո՞քա միւսնոյն Ֆի-զիկական երեւոյթի անձնաւորումն են զանա-զան կերպարանքներով: Այս պատճառով և յաճախ միւսնոյն առասպելը թէ դեւերի և թէ վիշապների մասին է պատմուում:

Մեզ հետաքրքրող առասպելի արդի պատմուածքը հայոց մէջ լսել ենք իբրեւ հեքաթ-նոյնն արգէն զրի առնուած գտնում ենք նաև Սրուանձտեանի² և Տ. Նաւասարդեանի³ ժողովածուների մէջ:

Կի հարուստ թագաւորի (վարիանտ՝ որսորդ) աչքը վախեցել է Սև լեռան վրայ բնակող վիշապ-ներից (վար. դեւերի): Աւստի նա ժեռնելու ժամա-նակ կտակ է անում իւր որդուն, որ Սև սար որսի չգնայ:

Քաջ որդին չէ լսում հօր խօսքին, գնում է Սև սար որսի և պատահում է աժդահար վիշապի: Պաւում են, և որսորդ արքայորդին կիսասպան է անում՝ վիշապին ու ձգում: Ապա նա մտնում է վիշապի ապարանքը, տիրում է նորա ստացուած-քին ու հարստութեան և ապրում այնտեղ:

Որդին մօրն էլ բերում է իւր մօտ՝ վիշապի ապարանքը, Սակայն մայրը դեղ է անում ու լա-ւացնում վիրաւոր վիշապին: Մայրը վիշապին ծա-ծուկ պահում է ապարանքում և նորա հետ սիրո-ղութիւն է անում:

Վիշապը մօր սիրտը իւր կողմն ունենալով՝ մօր հետ աշխատում է կորցնել որդուն: Մայրը հիւանդ է ձեռնում և վիշապի խորհրդով ուղար-կում է որդուն այնպիսի բաներ բերելու, որոնցով ինքը պիտի առողջանար: Իսկ այդ հազուագիւտ բաները—անմահական խնձոր, ոսկեղջիւր, եղնիկի կաթ, անմահութեան ջուր և ըն.—բերելու հետ կա-պուած են մեծ վտանգներ որդու կեանքի համար: Բայց մի հօրի մալքը աղջիկ (վար. պառաւ) օգ-նում է նորան և ամեն վտանգից ազատում: Մայրը վերջապէս իմանում է, որ եթէ որդու երկու բու-թըն իւր նետ աղեղի լարով կապէ, աղան ուժից կընկնի: Այդպէս անում է: (Վար. զլխի երեք մա-ղըն է հանում): Տղային սպանում է: Սակայն Հուրի մալքի շնորհիւ աղան կենդանանում է նո-րից, սպանում է վիշապին ու մօրը պատժում: Եւ այսպէս տէր է մնում վիշապի ապարանքին:

Այս միւսնոյն հեքաթը կայ կատարեալ նմանութեամբ, կարելի է ասել նոյնութեամբ, և ուրիշ ազգերի մէջ: Մենք այդ հեքաթ-ների իսկականը ձեռի տակ չունենալով, բո-վանդակութիւնն առնում ենք Բուսլայից:

Սլովակների մէջ այդ հեքաթը պատմում է այսպէս.

«Որդին մի բերդ մարբելով վիշապներից՝ բնա-կում է այնտեղ իւր մօր հետ: Բայց բերդի մի սենեակում մնում է մի վիշապ, որին այնտեղ չլթայած էին իւր եղբայր վիշապները: Այդ վի-շապին յաջողում է հրապուրել մօրը, որ իւր սի-րական վիշապի հետ աշխատում է կորցնել որդուն: Մայրը հիւանդ է ձեռնում և խնդրում որդուն, որ իրեն բժշկելու համար բերէ զանազան հազուա-գիւտ համեմունքներ, որոնց ձեռք բերելը մահու չափ վտանգաւոր է: Որդուն օգնում է սուրբ Շա-բաթը (св. Недѣлька), ... բայց մօրը վերջապէս յաջողում է կապել որդուն մետաքսէ լարով նա կանչում է վիշապին, որ և սպանում է որդուն... Սակայն ս. Շաբաթը յարուցանում է որդուն ան-մահական (մեր հեքաթի մէջ աղբիւրի) ջրով ու սպանում վիշապին...»

Նոյն աւանդութիւնը կայ և վալախնե-

1. Mannhardt, German. Mythen. եր. 207.

2. Մանանայ, եր. 200 «Նեղագուր մայր»:

3. Հայ ժող. ձեփարանք. Ե. եր. 36. «Անշի-

րի մէջ: Այստեղ որդին՝ Փլորիան, արդէն մի հասարակ մտքով չէ, այլ գերբնական հրաշալի ծնունդ ունի, նման Մարտի ծնունդին՝ ըստ Ովիդիոսի:

«Մայրը որդուն՝ Փլորիանին, յղանում է, խմելով մէջը մի փունջ ծաղիկներ գրած ջրից: Մայր և որդի բնակում են մի բերդում: որ վիշապների է պատկանում: Փլորիանը բոլոր վիշապներին յաղթում ու կապում է բացի մէկից, որին յետոյ մայրը սիրում է: Վիշապը դառնում է գեղեցիկ տղայ և մօր հետ աշխատում է: որ կորցնէ որդուն: Երկու անգամ Փլորիանը մահից ազատւում է կարծեցեալ բուժիչ միջոցներ բերելով մօրը: որ հիւանդ է ձեւանում: Բայց երրորդ անգամ մայրը վիշապի խրատով խնդրում է որդուն: որ գնայ անմահութեան ջուր բերելու մի աղբւրից: որ Սև սարի վրայ պահպանում է շար ոգին:»

Ծարունակութիւնը շատ նման է մեր հեքաթին (ըստ Նաւասարգեանի վարիանտի): Տղային օգնում են այստեղ ջրի փարիներ (ВОДЯНЫЕ ДЬВЫ):

Մեր հեքաթի և այս հեքաթների նմանութիւնը նոյնութեան է հասնում:

Նոյն աւանդութիւնը Չեռնագորիայում ոչ թէ հեքաթ է, այլ մի «նշանաւոր երգ»: Միայն վիշապների տեղ այստեղ դեբեր են դուրս գալիս, ինչպէս և Սրուանձտեանի վարիանտի մէջ գե է: Այդ երգի մէջ «եօթանասուն դեբեր և նոցա գլխաւորը ապրում են մի այրում: որդին խնայում է միայն գլխաւորին: որին և սիրում է մայրը: Ս. Ծաբաթի տեղ երգի մէջ որդուն օգնում է մի վիլլա»¹:—Վիլաները մեր քաջքերի կամ պարիկների տեսակին պատկանող ոգիներ են:

Մեր վիշապազանց առասպելի և այս հեքաթների նոյն լինելը ակնյայտնի է: Ազոնք միևնոյն առասպելի տարբեր պատմութեան են միայն: Անշուշտ, խորենացին առասպելն իւր մանրամասնութիւններով չէ բերում: Այստեղ չենք գտնում օրինակ, թէ Սաթենիկ տիկինը, որ վիշապ Արգաւանին սիրում է, վիշապի հետ աշխատած լինի իւր որդուն կորցնելու: Ծառ հասկանալի է թէ ինչու: Ի՛նչպէս կարող էր պատմագիրն այդ մէջ բերել:

¹ Буслаевъ, Истор. очерки русс. народнои словесности. кт. 323. նոյն տեղում յիշած է Писну Вука Караджиджа 2. № 8.

նա որ Սաթենիկի սէրն անգամ բովանդակութեան մէջ իբր տրիանք է անուանում: իսկ «Ճմարտեալ պատմութեան» մէջ չի էլ առնում այդ սէրը: Սակայն առասպելի մէջ այդ երկրորդականն է: Իսկ էականը կայ մեր հին առասպելի մէջ: Իականն է. Հայր թագաւորը (Արտաշէս) յարաբերութիւն ունի Սև լիւան (Մարտի) վիշապների հետ: նորա աչքը վախեցել է վիշապներից: Թշնամի է նոցա: Բայց երեւի կռուելով բան անել չէ կարողանում: ¹ Իսկ նորա որսորդ որդին (Արտաւազդ) որ նոյնպէս գերբնական ծնունդ ունի (ինչպէս Փլորիան), տիրում է վիշապների ապարանքին ու բերդերին: ² Մայրը, Սաթենիկ, սիրում է վիշապների գլխաւորին: (Մօր գաւաճանութիւնը չկայ): Սև Արտաւազդ ոչնչացնում է վիշապներին:

Թէ այս առասպելը որ այժմ հեքաթի բնաւորութիւն ունի, կտրոգ էր հին ժամանակ հայոց մէջ վիպասանքի և նոյն իսկ երգի նիւթ լինել՝ այդ մասին կասկածել կարելի չէ: քանի որ նոյն առասպելն այժմ ինչպէս ասացինք, Չեռնագորիայում վիպական երգ է: Իսկ թէ ինչպէս, կամ ինչ պատճառով է վիշապների այս առասպելը կապուել Արտաշէսի մասին եղած պատմական երգերին՝ այդ մասին յետոյ խօսք կը լինի, երբ Տիգրանի և աժդահակի մասին կը գրենք:

Վիշապների գէմ կռուի այս առասպելին միացել է վիշապների և մի ուրիշ առասպել,—Արտաւազդի փակուելը Ազատ Մարտի մէջ: Տեսնենք այդ առասպելն ևս:

(Իլ շարանաւոր է)

Մ. Արեղեան.



¹ Այս իմաստով կարելի է հասկանալ ճշմարտեալ պատմութեան 2-ր. հատումը, քի Մաման որդուն ուղարկում է վիշապների դէմ, բայց երկու տարուց յետոյ հաշտում է ևս «ի բաց քալ հրամայե զինչսն»:

² Խորենացու «ճշմարտեալ» պատմութիւնն այն տրամադրութիւնն է բովանդակում, որ Արտաւազդ հակառակ իւր հօր կամքի է կռուում Արգամի դէմ, ինչպէս և հետքի մէջ որդին հօր կամքի հակառակ է վարում: